

ԶԵՐԱԳԻՐ ԾԱՐԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՎՈՒՊՈԼԻՍ—1636 թ.

Գրիչը՝ Միքայել Թոխաթցի, մեծությունը՝ 12×9×7 ամ. 341 թերթ,
31 պրակ, գիրը՝ բոլորգիր, նյութը՝ մագաղաթ, գրությունը՝ միասյուն:

Քաղաքամայր Երևանի բնակիչ Աղամ Հարությունի Ղապաշյանը Ս. Խորվիրապի վաճրին նվիրեց իրենց ընտանիքում սրբորնես պահպանված մի կիսադրված ձեռագիր շարական¹, որն ունի 350 տարվա հնություն: Այս ձեռագիրը մատյանը կրկին ու կրկին խորհի է տալիս մեր տաճշված ժողովրդի տառապալից անցյալի մասին, թե ինչպիս անաւելի նեղությունների ու հարցստահարությունների է ենթարկվել նա, քայլ այնուամենայնիվ ունեցել է հոգեկան մեծ կորով, դիմագրավելով կամքի ուժ, չհուսահատվելով համառություն: Իր ազգային դեմքը և հավատքը պահպանելով համար նա կարողացել է ժամանակի արհավիրքներից փառկել իր մշակութային գանձերը՝ աշխարհակործան ժողովուրդներին ի հակադրություն: Հայկանարար գրիշն ու ծաղկողը հյութական ու բարոյական մեծ զրկանքներ են ապրել, սակայն իրենց անձնուրաց գործով մեզ են հասցրել հայ մշակույթի այս բարձրարժեք հուշարձանը:


¹ Ձեռագիրը հանձնված է Վեհափառ Հայուակելիմ՝ Մայր Աթոռի գրապահոցում ի պահպանություն:

Ձեռագրի կազմը ստվարաթղթից է, կաշվով երեսապատված, միջուկը՝ իր թղթերից, որոնց վրա գրված տառերը քիչ ընթեռնելի են: Ինչպես երկում է, ձեռագիրը հնտագայում նորից վերակազմվել է: Ունի չորս պահպանակներ, որոնցից երկուսը թղթից են, երկուսը՝ մագաղաթյա, որոնք համարվում են առաջին և վերջին պրակների պահպանակներ: Ձեռագիրը արտաքնապես լիստ կերպով վճարված է, շուրջ բոլորը ալրված և մաշված: Հետագայում ավելացված թղթի պահպանակների վրա կան այբբենական տառեր և անհականալի գրություններ: Որոշ տեղեր տաքությունից գումափոխված են: Կազմի վիճակը բավարար է: Թիկունքը այրված պահպանակ չունի: Անվան վիճակում են թիկունքի թեկականական տառեր և անհականալի գրություններ: Ձեռագիրն ամբողջովին սևացած է: Բազմաթիվ լուսանցակողներ նկարագրդված են թղթապատկերներով և ծաղկապատկերներով:

Ձեռագրի 1ա և 128ա էջերում կան մանրանկարված կիսախորաններ՝ լուսանցագրություններով և գլխատառ գեղեցիկ թղթագրերով: 135 էջերում կան թղթագրեր, պյուներով գմբեթներ, լուսանցազարդություններ և մանրանկար գլխատառեր:

201-րդ էջի լուսանցքում գրված են երկու նախաղատություններ, որոնցից մեկի միտքը անհասկանավի է, մյուսը գրված է այսպէս՝ «Հայրապետ մեր Ղազար մարդությարութեանցը զաքարայ մեզ զիւ ընթ պո-

վածները, իրենց ութ ձայներով ու դարձվածքներով, կան վերոհիշյալ ձեռագրի մեջ: Կան մի շարք շարականներ, որոնք են ու առաջ են գրված, ինչպես «Սրբոյն Մինասայ Երմոդինեայ և Գրաքոսի» ըզմիշատոկ վկա-



Ձեռագիր շարական

Դուս: Խակ 202ա էջի լուսանցքում գրված է «համայն հայրապետ ղազար»: Ինչպես երկում է, այս գրությունները հետագայում են զետեղվել, որը համընկնում է Տ. Ղազար Ա. Զարկեցի Ամենայն Հայոց կաթողիկոսի ժամանակաշրջանին (1787—1751 թթ.):

Ձեռագրի չորս կողմը այրված է, հրաժքով փրկված հրդեհից: Քանի որ ձեռագիրը ամբողջությամբ մագաղաթյա է, ապա կրակից բոլոր թերթերը կոչ են եկել, որոշ տեղեր էլ խանձրված են: Ներսի էջերի գրությունները պահպանվել են Բիանալի Կերպով և դյուրնետների են: Բազմաթիվ բառերի վրա կան հայկական երաժշտական խազագրեր, իրենց ոլորապտույտ և կորպագիծ նշաններով: Այս առումով ձեռագրի խազանշանների լուրջ ուսումնափրությունները կարող են նոր լույս սփռել շարականգիտության մեջ:

1888 թվականին Վաղարշապատում հրատարակված շարականի գրեթե բոլոր հատ-

յիցն, Սրբոյն Կիւրոյի Մամկոնը նոր Սիովնի» շարականները և այլն:

Ձեռագիր շարականը վերջանում է «Խորհուրդ խորին», «Յայս հարկ» և «Եօթն խոտանարակացն» շարականներով՝ «Յաւուս վերջին ժամանակի... պահել զմեզ միշտ անվտանգ» և ապա «Փառք ամենասուրբ երրորդութեանը», իսկ վերջում՝ գրիչ Միքայել Թոխաթցու հիշտակարանն է՝

«Գրեցաւ թվին ՌԶԵ ի մարքարաքս Կոստանդինոպալիս ձեռամբ Թոխաթցի Միքայելի աղաքեն զամենեսեանդ ոքք հանդիսիք սմա կարդալով կամ յարինակելով միով ողորմեալի յիշեցեք զիս և զնընշեցեալս իմ. և Աստուած յիշողդ յիշէ իր սուրբ արքայութիւնն ամեն. Հայր մեր...»:

ԳՈՒՐԳԵՆ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ
ՄՈՒՐՍՈՅԱՆ

Վաճառայր Ա. Խորվիրապի վաճքի